ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնք
Ռ.Վարդանյան 28, Հեռ./0234/4-00-00, 4-00-77

N 13 գ.Արարատ
/ 14 / 01 2019 թ.

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ II ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Արարատ գյուղում տեղի է ունեցած հանրային լսման ժամանակ ներկայացվեց Արարատի մարզի Արարատ համայնքի 2018թ II կիսամյակի բյուջեի հաշվետվությունը՝ կատարած ծախսերն ու եկամուտները:

Նախագահում էր համայնքի ղեկավար Կ.Ղազարյանը, արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Ա.Մելոյանը:

Մասնակցում էին դպրոցներից ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակազմը, ավագանու անդամները ինչպես նաև համայնքի բնակիչներ, հրավիրված էր Արարատի մարզպետարանից քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Վահե Բաղդասարյանը:

Հաղորդումով հանդես եկավ համայնքի ղեկավար Կ.Ղազարյանը՝

## II կիսամյակի եկամուտների մուտքագրման տեղեկատվություն

| | |
|---|---|
| ա/ հողի հարկ | 18.950.000 դրամ |
| բ/ տեղական տուրքեր | 834.000 դրամ |
| գ/վարձակալական վարձավճարներ | 5.482.000 դրամ |
| դ/ գույքահարկ | 17.625.004 դրամ |

## *II կիսամյակի ծախսերի մասին տեղեկատվություն*

Տրամադրվել է սոցիալական օգնություն՝

ա/ անապահովների ընտանիքներին 2.235.000 դրամ գումար

բ/ նորածին երեխաների մայրերին 50 երեխայի համար 1.030.000 դրամ գումար

գ/ մահացածների 26 ընտանիքներին որպես օգնություն տրված 1.300.000 դրամ գումար

## *Հատկացվել է՝*

ա/ Մանկապարտեզի երկու ավարտական խմբերի միջոցառումների համար 120.000 դրամ

բ/ Արարատ համայնքի նոր կառուցվող Սուրբ Զորավորի կառուցապատման աշխատանքներին աջակցելու համար 1.500.000 դրամ

գ/Արարատ գյուղի Սուրբ Հակոբ եկեղեցում անցկացվելիք Աստվածամոր վերափոխման տոնի համար հատկացվել է 35.000 դրամ

դ/ <<Մշակույթային վերածնունդ>> արվեստների և արհեստների համահայկական փառատոնում ազգային խոհանոց ոլորտը ներկայացնելու համար հատկացվել է 200.000 դրամ

ե/ Արարատ գյուղի ֆուտբոլի թիմին գնդակ գնելու համար հատկացվել է 30.000 դրամ

զ/ Թիվ1 միջն դպրոցի ՆԶՊ առարկայի դասասենյակը թեմատիկ պարագաներով ապահովվելու համար հատկացվել է 50.000 դրամ

է/ Գառնիկ Ղուկասյանի հիշատակին նվիրված կիսանդրու կառուցման աշխատանքին աջակցման համար հատկացվել է 50.000 դրամ

ը/Արարատ համայնքի տարեցների համար էքսկուրսիա միջոցառում կազմակերպելուհամար տրամադրվել է 100.000 դրամ

թ/Ուսուցիչների տոնի առթիվ մշակույթի տանն թատերական ներկայացման և նվերներ գնելու համար հատկացվել է 500.000 դրամ

ժ/<<Քայլող տիկնիկ>> միջոցառման կազմակերպման համար հատկացվել է 330.000 դրամ

ի/ <<Զինվորի կողքին զինվորի հետ>> բարեգործական ծրագրին աջակցելու համար հատկացվել է գումար 50.000 դրամ

լ/<<Արարատ ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ի պատուհանների վերանորոգման համար հատկացվել է 300.000 դրամ

խ/ Արարատ գյուղի 3 դպրոցների սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին դասագրքերի վարձավճարներ 988.190 դրամ

ծ/<<ԴՕՍԱՖ>> Արարատի ավտոդպրոցի վարորդ-զինվոր խմբում սովորողների համար ճանապարհածախս 50.000 դրամ

կ/ Համայնքի թիվ1 դպրոցին օդորակիչ-տաքացուցիչ գնելու համար հատկացվել է 135.000 դրամ

## *Միջոցառումներ՝*

ա/ Սուրբ Հակոբ եկեղեցում Սուրբ Խաչի, Խաչվերաց տոնի տոնի կապակցությամբ մատաղ միջոցառում 140.000 դրամ

բ/ Անկախության տոնի 27-ամյակի կապակցությամբ տոնական համերգ, հրավառություն 350.000 դրամ

գ/ Սուրբ Հակոբ եկեղեցու տոնական միջոցառման համար, մատաղ ճաշկերույթ կազմակերպելու համար տրամադրվել է 700.000 դրամ

դ/ Ամանորյա տոների միջոցառման կապակցությամբ տրամադրվել է 1.010.000 դրամ

Հաղորդումով հանդես եկավ համայնքի ղեկավարը 2019թ կատարվելիք աշխատանքների և ծրագրերի մասին:

Արարատի համայնքի ղեկավար՝ Կ.Ղազարյան

*Կատարող՝ Ա.Մելոյան*